

ԵՎՍՏԱԹԵՈՍ ՍԵԲԱՍՏԱՑԻՆ, ԲԱՐՍԵՂ ՄԵԾԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ *

Ըստ որոշ հեղինակների, վանականությունը Հայաստան է մուտք գործել Կապադովկիայից, Պոնտոսից և Փոքր Հայքից: Սոզոմենը[1], օրինակ, վանականության տարածվելը Հայաստանում կապում է Եվստաթեոս Սեբաստացու հետ՝ ասելով. «...Եվստաթեոսը, որը ղեկավարում էր Սեբաստիայի եկեղեցին Հայաստանում, հիմնեց վանականների մի եղբայրություն Հայաստանում, Պափլագոնիայում ու Պոնտոսում և եղավ հեղինակը մի խիստ օրենսդրության...»: Թվում է, թե Սոզոմենը իր մտքում ուներ ավելի շուտ Փոքր Հայքը, քան թե Մեծ Հայքը: Բայց շատ հավանական է, որ Եվստաթեոսի գործունեությունը, որն արագ տարածվեց Պոնտոսում, Պափլագոնիայում և Փոքր Հայքում, կարող էր տարածում գտնել նաև Մեծ Հայքում:

Եվստաթեոսը, ըստ Սոզոմենի[2] և Սոկրատեսի[3], Կեսարիայի Եվլալիոս եպիսկոպոսի որդին էր: Սակայն այդ ժամանակահատվածում նման անունով որևէ եպիսկոպոս չի հիշվում Կեսարիայում: Առաջարկվում է ընդունել Եվլալիոսին որպես Անտիոքի եպիսկոպոս և Եվստաթեոսի հոգևոր հայր, ոչ թե՝ մարմնավոր[4]: Ֆ. Լուֆսը[5] նույնացնում է Եվստաթեոսին Սեբաստիայի այն եպիսկոպոսի հետ, որը Նիկիայի ժողովում պաշտպանեց Արիոսին: Գրիբոմանը[6] համաձայն է Լուֆսի այս կարծիքին: Նա նշում է. «Այս վարկածը ավելի տրամաբանական հիմք է տալիս Եվստաթեոսի պատմությանը, որի ամբողջ գործունեությունը թվում է, թե տեղի է ունեցել Պոնտոսում և Հայաստանում:

Եվստաթեոսն իր ուսումը ստացել էր Ալեքսանդրիայում և աջակցել էր Արիոսին, որի ազդեցությունից երբեք չձերբազատվեց[7]: Աթանասը[8] նշում է Եվստաթեոսի անունը այն եկեղեցականների շարքում, որոնց Անտիոքի Եվստաթեոս եպիսկոպոսը մերժեց ընդունել իր եկեղեցականների շարքում 330 թ.: Պ. Տեր-Պողոսյանը[9] ասում է, որ շուրջ 326 թ. Եվստաթեոսը աքսորվում է Անտիոքի պատրիարքի կողմից և այդ թվականից հետո հաստատվում Փոքր Հայքում: Եվստաթեոսը Եգիպտոսում եղած ժամանակ ծանոթացել էր այնտեղի ճգնավորական և վանական շարժումներին[10]: Գրիբոմանը[11] չի համաձայնվում այս տեսակետին: Նա նշում է. «...Հաճախ հաստատել են, որ նա Ալեքսանդրիայում ենթարկվել է եգիպտական վանականության ազդեցությանը, բայց դա ապացուցելը այնքան էլ հեշտ չէ: Նա հարում է ավելի շատ այն հոսանքներին, որոնք այդ նույն ժամանակաշրջանում դրսևորվում էին Սիրիայում և Միջագետքում»:

Բարսեղ Կեսարացին, որպես Եվստաթեոս Սեբաստացուն հետևող, նրա կողմից ուղարկվեց Եգիպտոս և Ասորիք՝ տեղի վանական շարժումներին անձնապես ծանոթանալու: Այս իրողությունը վկայում է այն, որ Եվստաթեոսը ծանոթ էր այդ շարժումներին Եգիպտոսում:

Նեոկեսարիայի ժողովում, երբ նա տակավին երեց էր, քննադատվեց և եկեղեցուց դուրս հանվեց կանոնավոր եկեղեցական կգեստներ չհագնելու պատճառով[12]: Փոքր Հայքում հաստատվելուց հետո Եվստաթեոսը այնտեղ հեղինակավոր դեմք դարձավ, և շատերը հետևեցին նրան:

---

* Հայկազուն աբեղա Նաջարյանի վարդապետական թեզից մի հատված:

Հավանական է, որ Եվստաթեոսը ծագումով հայ էր: Գրիգոր Նազիանզացին[13] նրան կոչում է «...Armenius plane barbarus est»: Գրիգոր Նյուսացին[14] իր «Ընդդեմ Եվնեմոսի» աշխատության մեջ ասում է. ὁ κατὰ τὴν. Ἀρμενίαν Εὐστάθιος. Բարսեղն[15] իր նամակում, ուղղված Եվստաթեոսին, Հայաստանը ներկայացնում է որպես իր հայրենիքը (նրա ծնողները Պոնտոսից էին)՝ հավանաբար շեշտելու համար, որ ինքը ծանոթ էր այդ վայրերի սովորություններին և մի տեսակ ուզում էր իր ուսուցչին համերկրացի ցույց տալ: Գանգրայի ժողովի կանոններին կցված նամակը ուղղված է հայ եպիսկոպոսներին[16]: Սա ցույց է տալիս, որ Եվստաթեոսը մեծ համբավ էր վայելում Փոքր Հայքում, և այդ իսկ պատճառով այդտեղի եպիսկոպոսները զգուշացվում են: Գրիբոմանը[17] հաստատում է այս՝ նշելով. «Եվստաթեոսը հայ է. հանրային կարծիքը նրա երկրում գուցե սկսել էր պաշտպանել նրան...»:

Եվստաթեոսի ազդեցությունը վանականության վրա, իր աշակերտների միջոցով, տարածվեց իր ծննդավայրի սահմաններից այն կողմ: Բարսեղ Կեսարացին այս աշակերտներից ամենանշանավորն էր: Երբ Բարսեղ Մեծը վերադառնում է Աթենքից 357 թ., գրավվում է Եվստաթեոսի վանական գործունեությամբ: Վերջինիս խորհրդով Բարսեղը այցելում է Եգիպտոսի, Ասորիքի և Միջագետքի վանքերը[18], իր վերադարձից հետո ինքն իրեն նվիրում վանական կյանքին Պոնտոսում, որտեղ նրան այցելում է Եվստաթեոսը[19]: Եվստաթեոսի ազդեցությունը զգալի է Բարսեղի սկզբնական գործերում[20]: Սեբաստիայի եպիսկոպոսը լինելուց հետո (357 թ. առաջ) Եվստաթեոսը հիմնում է մի միաբանություն և իր հետևորդներից Այերեոսին նշանակում է վանահայր[21]: Ավելի ուշ, երբ Բարսեղը կամենում է հիմնել նման մի եղբայրություն, Եվստաթեոսը ուղարկում է իր ուսանողներից երկուսին օգնելու համար Բարսեղին իր աշխատանքում[22]: Բարսեղը, երբ տակավին լավ հարաբերություն ուներ Եվստաթեոսի հետ, նրան դիմում է որպես մեկին, որը գերազանց է մարդկանց մեջ՝ μεῖζον ἢ και 'ἄνθρωπον.

Բացի Բարսեղից և Կապադովկիայում գտնվող Եվստաթեոսի աշակերտներից, մենք վկայություններ ունենք նաև Եվստաթեոսի այլ հետևորդների մասին: Սոզոմենը[24] վկայում է, որ Մակեդոնիոսը Եվստաթեոսի թելադրանքով ճգնավորական ապրելաձևը որդեգրել և Կ. Պոլսում հիմնել է մի վանական հաստատություն, որը գոյություն ուներ Սոզոմենի ապրած ժամանակաշրջանում:

Հիպատիոս Փռյուգիացին[25], որը Կ. Պոլսում 404—446 թթ. մի նշանավոր վանքի վանահայրն էր (Կաղնու մենաստան), եկել էր Թրակիայի մի մենաստանից, որը հիմնել էր Հոլիան անունով մի զինվոր, որ Հայաստանից էր և Եվստաթեոսի հայրենակիցը: Եվստաթեոսի ազդեցությունը վանականության վրա զգալի էր մինչև Դ դարի վերջերը, երբ հերետիկոսական ուղղությունները[26] նրա տարածած հեղափոխական գաղափարներով գրավվել էին, ինչպես օրինակ, մակեդոնականները, ապա նաև մծղնեականները:

Գանգրայի ժողովի կանոնները[27] մեզ կարևոր տեղեկություններ են տալիս Եվստաթեոսի և նրա հետևորդների վանական գործունեության մասին: Նրանք այս ժողովում դատապարտվում են ծայրահեղ ճգնավորության պատճառով, որը վտանգում էր Եկեղեցու դիրքը, քանի որ նրանք գտնում էին, որ ամուսնացած մարդիկ փրկության հույսից զրկվում են, այնպես որ դրանով քաջալերում էին կուսակրոնությունը բոլորի համար[28]: Նրանք մերժում էին ներկա գտնվել կամ մասնակից լինել պատարագներին, որոնք կատարվում էին ամուսնացյալ քահանայի կողմից: Պահք էին պահում կիրակի օրերին և ուտում այն օրերին, որոնք Եկեղեցին վերապահել էր պահքին[29]: Անտարբեր էին դեպի վանականի սքեմը[30]: Ոմանք միս երբեք չէին ուտում[31]: Իրենց սրբակեցության պատճառով ("κατ ἐξοχὴν") նրանք ցանկանում էին, որ եկեղեցին իրենց բաժին հանի ընծա տրված պտղից: Արհամարհում էին այն վայրերը, որտեղ մարտիրոսների մասունքներ էին պահվում, ինչպես նաև նրանց, ովքեր հավաքվում էին այնտեղ աղոթելու[32]: Կանայք կտրում էին իրենց մազերը և հագնում տղամարդկանց զգեստներ: Նրանք քաջալերում էին ստրուկներին, որոնք հեռանում էին իրենց տերերից[33]: Եվստաթեոսականները իրենց ապրելակերպով քննադատում էին աշխարհիկ իշխանություններին և մերժում տիրող ընկերային կառուցվածքը: Միաժամանակ նրանք ընդդիմանում էին պաշտոնական Եկեղեցուն, որը 313 թ. և հատկապես 325 թվականից հետո, աշխատում էր ինքն իրեն ներկայացնել ոչ միայն որպես հոգևոր իշխանություն, այլև՝ աշխարհիկ: Այս պատճառով նրանք իրենք իրենց համարում էին Քրիստոսի ճշմարիտ հետևորդներ՝ մերժելով Եկեղեցու կողմից հաստատված օրենքները:

4-րդ դարում Հայաստանի վանականության մասին վկայությունները շատ աղքատ են: Հայաստանի վանականության վրա Եվստաթեոսի ունեցած ազդեցության մասին որոշակի փաստեր չունենք: Սրա պատճառներից մեկն այն է, որ 5-րդ դարի մեր մատենագիրները մեծ հարգանքով էին նայում Բարսեղին, մինչդեռ Եվստաթեոսը, որը հռչակվել էր հե-

ռետիկոս, աննկատ էր թողնվել: Սակայն անուղղակի ակնարկությունների վրա հիմնվելով՝ գուցե հնարավոր է մի վուգահեռ անցկացնել այդ ժամանակահատվածում Մեծ Հայքում, Փոքր Հայքում և Պոնտոսում տիրող վանական դրության մասին:

Հուսիկը իր երկվորյակ որդիների ծննդից հետո չի մոտենում իր կնոջը, բայց շարունակում է ապրել նույն հարկի տակ[34]. սա մի արարք էր, որը դատապարտվել էր Գանգրայի ժողովում[35]:

Տեսանք, որ եվստաթեոսականները չէին հարգում մասունքներն ու վկայարանները: Նույնը կարելի է ասել նաև Շաղիտայի և Դանիելի պարագային, որովհետև փաստարկ էր բերվում, որ «եթե տերունական մարմինը երկու օր գերեզմանում ծածկվեց մինչև երրորդ օրը, երբ բարձրացավ իր Հոր մոտ, որչա՞փ ավելի պետք է, որ մեր մարմինները հողի տակ ծածկվեն[36]:

Վրթանեսի կաթողիկոսության շրջանին (333—341) պարսիկների դեմ մղված ճակատամարտերից մեկում ծանր կորուստներ են տալիս հայերը, որոնց թվում էր նաև սպարապետ Վաչե Մամիկոնյանը:

Այս ծանր կորստի առթիվ Վրթանեսը կանոն է հաստատում, ըստ որի ամեն տարի Աստուծո սուրբ Սեղանի առջև պատարագի ընթացքում, սրբերին հիշատակելուց հետո, պետք է հիշվեն նաև նրանք: Քանիցս Վրթանեսը հիշում է, որ նրանք զոհվեցին պաշտպանելու համար մեր հավատը և մարտիրոսների վկայարանները հեթանոսներից[37]: Պաշտոնական Եկեղեցին Հայաստանում ընդունում է նահատակների մասունքների պաշտամունքը և հարգանքը դեպի նրանց վկայարանները, սակայն այս դեպքում հայրենասեր մեծ Հայրապետը ազգային սրբերին էլ է տեղ հատկացնում պատարագի ընթացքում հիշատակվող սրբերի շարքում, այսպիսով առավել ևս տարածելով հարգանքը հավատի համար ընկածների մասունքների և նրանց հիշատակին կառուցված վկայարանների նկատմամբ:

Երուսաղեմի պատրիարք Մակարիոսի (312—333) նամակից, ուղղված Վրթանես կաթողիկոսին, երևում է, որ Հայաստանում այդ ժամանակաշրջանում եղել են արիոսական եպիսկոպոսներ, և Տուրկասը հիշվում է որպես մեկը նրանցից[38]: Ըստ Եպիփանի[39], Եվտակտոսը, գալով Եգիպտոսից, հաստատվում է Փոքր Հայքում և շատերին մոլորեցնում. „...Ἦν Γὰρ ἀπο τῆς μικρᾶς Ἀρμενίας, ὡς ἔφην, ὁρμώμενος, τῶν Σατάλης πλησίον τόπων. ἐπανελθὼν εἰς τὴν ἑαυτοῦ πατρίδα, πολλοὺς ἔχρανε τῆς αὐτῆς μικρᾶς Ἀρμενίας, προσφθαρείς τισι,.."

Բնական է, որ գոյություն ուներ կապ Փոքր Հայքի և Մեծ Հայքի արիոսականների միջև ու այս էլ հենց պատճառ էր լինելու, որ Մեծ Հայք թափանցեին նաև Փոքր Հայքում զբաղվող վանական շարժումները:

Ինչպես երևում է Մակարիոսի նամակից[40], Հայաստանում այդ ժամանակաշրջանում եպիսկոպոսի բացարձակ հեղինակությունը ամենուրեք չի ընդունվել ժողովրդի կողմից: Եվստաթեոսն էլ իրեն բոլոր հետևողներին համարում էր հավասար: Եվստաթեոսը քաջալերում էր հագնել փիլիսոփաների թիկնոցը: Ներսես Մեծի մահից հետո (373) Աղբիանոսի տնից Զավեն եպիսկոպոսը, ապա, նրան հետևելով, Շահակ և Ասպուրակես կաթողիկոսները մի նոր սովորություն են հաստատում Հայ Եկեղեցում՝ համոզելով քահանաներին կրել զինվորական հագուստներ. «Նրանք թողին առաքելական եկեղեցիների սովորությունը... քահանաներն այլևս չէին հագնում պճղնավորներ, ինչպես ի բնե սովորություն էր, այլ սկսեցին խոտոր կտորներ գործածել մինչև ծնկները»[41]:

Թեև Եվստաթեոսը այս սովորությունը թողել էր Գանգրայի ժողովում քննադատվելուց հետո, բայց հնարավոր է, որ նրա հետևորդները այն պահած լինեին բավականին երկար:

Հայոց Արշակ Բ թագավորը շուրջ 366 թ. հիմնադրում է Արշակավան քաղաքը և այն մարդաշատ դարձնելու նպատակով մի հրովարտակ է հրապարակում, որ բոլոր չարագործները ազատ կլինեն իրենց հանցանքներից, եթե գան և բնակվեն այդ քաղաքում: Ասվում է, թե շատ կանայք, թողնելով իրենց ամուսիններին, գալիս ու հաստատվում են այնտեղ: Շատ ամուսիններ, լքելով իրենց կանանց, գալիս են այնտեղ: Ծառաները, հափշտակելով իրենց տերերի գանձերը, հաստատվում են այնտեղ: Չարագործների շարքերում հիշվում են ստախոսներ, վրդարտողներ, խաբեբաներ, դատի մեջ ստողներ[42]: Եթե նկատի առնվի, որ Եկեղեցին այս ժամանակաշրջանում իր ձեռքում էր կենտրոնացրել դատական իշխանությունը[43], նաև այն, որ Ներսես Մեծը Աշտիշատի ժողովում նաև աշխարհականներին վերաբերող բարեկարգական որոշումներ էր հռչակել, պարզ է դառնում, որ Արշակի քայլը ուղղված էր նաև պաշտոնական Եկեղեցու դեմ: Հավանաբար նույնիսկ կային որոշ եկեղեցականներ, որոնք դժգոհ էին Ներսես Մեծի բռնած ուղղությունից, և Արշակը նրանց կարող էր օգտագործել:

Վերևում նշված կետերը հիշեցնում են Եվստաթեոսի ուղղության որոշ գծեր: Գուցե և կարելի է եզրակացնել, որ Եվստաթեոսի

շարժումը այս տեսանկյունից էլ որոշ ազդեցություն է ունեցել Մեծ Հայքում:

Արշակ Բ-ը, երբ հաջորդեց իր հորը՝ Տիրանին, բյուզանդական կողմնորոշում ընդունեց, և Ներսեսի կաթողիկոսանալը (շուրջ 353 թ.) պետք է այս լույսի տակ դիտել[44]:

Ներսեսը Հուսիկ կաթողիկոսի թոռն էր և որդին Աթանագինեսի[45]: Նա աշխարհիկ կյանք էր վարել և ամուսնացել Վարդան Մամիկոնյանի դստեր՝ Սանդուխտի հետ: Շուրջ 348 թ. այր ու կին, ինչպես երևում է, իրենց ուսումը շարունակելու համար եղել են Կեսարիայում[46]:

Օրմանյանը[47], գտնելով, որ Ներսես Մեծը տարեկից է Բարսեղին, Գրիգոր Նյուսացուն և Նազիանզացուն, հավանական է համարում, որ նա նրանց հետ ուսում առած լինի Կեսարիայում: Սակայն Բարսեղի ազդեցությունը Ներսեսի վրա պետք է թողնվի Ներսեսի կյանքի վերջին տարիներին:

Բարսեղը Աթենքում ստացել է աշխարհիկ կրթություն: Երբ վերադարձել է Կապադովկիա (357), սկզբում, որոշ ժամանակ, զբաղվել է փիլիսոփայության դասեր տալով: Աստիճանաբար նա Եվստաթեոսի ազդեցության տակ վանական կյանքի է անցել և 360-ական թվականներից սկսած մեծ համբավ է վայելել որպես ազդեցիկ հեղինակություն: Այդ համբավը առավել ևս տարածվել է Կեսարիայի եպիսկոպոս դառնալուց (370) հետո:

Բուլանդը[48], երբ ներկայացնում է Ներսեսի կյանքը, կարծեք գրում է՝ հետևելով Բարսեղի վարքին: Ա. Սարգսյանը[49] եզրակացնում է. «Բուլանդ՝ բերանացի սերտած կերևի սուրբ Բարսղի վարքն... Բյուզանդացվույն գրիչն անսանձ կարշալե և կարծես Ս. Բարսղի պատմությունը կթարգմանե մեկի»: Բուլանդը, ցույց տալու համար, որ Ներսեսը Բարսեղ Մեծի ճշմարիտ հետևորդն է եղել, Ներսեսին կապում է Բարսեղի հետ շատ վաղ շրջանից: Ըստ նրա, Բարսեղը, որպես քահանա, ներկա էր Կեսարիայում Եվսեբիոսի կողմից Ներսեսի եպիսկոպոսական ձեռնադրությանը: Եվսեբիոսը Կեսարիայի եպիսկոպոս էր եղել 362 թ., Բարսեղը քահանա էր դարձել 364 թ., իսկ Ներսեսը եպիսկոպոսացել էր 353 թ.:

Այս մանրամասնությունները կարևոր են, որովհետև սրանցից կարելի է եզրակացնել, որ Ներսես Մեծը իր կաթողիկոսության առաջին տասը տարիներին Եվստաթեոսի ազդեցության տակ պետք է եղած լիներ, որը թեև եպիսկոպոս էր ձեռնադրվել 357 թ., բայց 340-ական թվականներից արդեն հեղինակություն էր Փոքր Հայքում, Պոնտոսում և Կապադովկիայում:

Ներսեսը, ստանալով աշխարհիկ կրթություն, վինվորականի կոչումով ծառայում է արքունիքում որպես Արշակ Բ-ի սենեկապետը: Հավանաբար իր կնոջ վաղաժամ մահն է Ներսեսի մեջ առաջացրել եկեղեցական դառնալու ձգտումը: Բուլանդը[50] հող է պատրաստում այս ուղղությամբ, երբ ասում է. «Նա դեռևս երբ վինվորական տեսքով էր, ներքուստ Քրիստոսի զգեստն էր կրում և ապնվական վարք ու բարք էր իր մեջ մարմնավորում»: Պարզ է, որ վինվորական կրթություն ստացած որևէ անձնավորություն պետք է մտածեր կարգ ու կանոնի մասին, ինչպես Պախումը՝ Եգիպտոսում, այնպես էլ Ներսեսը՝ Հայաստանում: Նրա առաջին գործը լինում է ժողով գումարել Աշտիշատում և կանոններ սահմանել թե՛ եկեղեցու և թե՛ աշխարհականների համար. «...Կազմակերպեցին և Հայոց աշխարհի ամբողջ ժողովուրդը դարձրին իբրև վանականների մի ընդհանուր միաբանություն, բացի ամուսնությունից»[51]: Նա օթևաններ է հիմնում բորոտների, ախտավորների, հաշմանդամների համար, ինչպես նաև պատսպարաններ՝ աղքատների համար: Եկեղեցու կարգերը շատացնում է շեն ու անշեն տեղերում և կրոնավորների թիվը բազմացնում: Խորենացին[52] այս մասին գրում է. «Շինէր և յանապատ և յանմարդ տեղիս եղբայրանոցս և մենաստանս և յատկանձնակաց խրճիթս...»: Հետևաբար, ըստ Խորենացու, Ներսես Մեծի ժամանակ վանականության երեք տեսակներն էլ գոյություն ունեին Հայաստանում՝ ճգնարաններ, միմյանց հետ թույլ կապ ունեցող մենաստաններ և կազմակերպված վանքեր:

Ըստ Ներսեսի վարքի[53], նա մնում է Սեբաստիայում և նույնիսկ այնտեղ եկեղեցիներ է կառուցում: Սա կարելի է համարել Ագաթանգեղոսի ազդեցությունը և կամ ավելի ուշ շրջանի հավելում, այսինքն՝ շուրջ ԺԱ դարերի, երբ հայերի թիվը շատացավ Սեբաստիայում: Գուցե դա արձագանքն է Ներսեսի Նեոկեսարիայում մնալու (368—370 թթ.), մինչև բյուզանդացիների օգնությամբ Հայաստանի գահին Պապի հաստատվելը[55]: Նույն վարքի հեղինակը նշում է, որ Ներսեսի ձեռնադրությունից առաջ ճգնավորները Հայաստանում ապրում էին քաղաքներում և գյուղերում՝ ընտանիքների մեջ: Սա Ներսեսի կողմից անհարմար է նկատվում, և նա հրամայում է առանձին բնակելի շենքեր կառուցել եղբայրների համար: Եթե վարքի հեղինակը պարզապես չի արձագանքում այլ դեպքերի, ապա այդ նշանակում է, որ Ներսեսից առաջ Հայաստանում ճգնավորական շարժումը նման էր Արևմուտքում Եվստաթեոսի շարժմանը, իսկ հարավում՝ Մար Ավգինի շարժմանը:

Նախքան Ներսեսի գործունեության անցնելը անհրաժեշտ է լուսաբանել Բարսեղ Մեծի դիրքը Հայաստանի նկատմամբ; Ոմանք գտնում են, որ Հայաստանը ի հոգևորս այս շրջանում ենթակա էր Կապադովկիայի եպիսկոպոսին: Եթե դա ճիշտ է, ապա վանականությունը Հայաստանում վաղ շրջանում պետք է ապդված լիներ Բարսեղի գործունեությունից: Այս կապակցությամբ տեղեկություններ ստանալու համար առաջին հերթին պետք է դիմել հենց Բարսեղի նամակներին: Բարսեղի այն նամակները, որոնք առնչվում են հայերի հետ, կարելի է տեղադրել 372—76 թվականներին:

Արևելքում բյուզանդական զորքերի հրամանատար Տերենտիոսին[56] ուղղված Բարսեղի նամակից հստակ է, որ Բարսեղին կայսեր կողմից հանձնարարվել էր Հայաստանում եպիսկոպոսներ նշանակել: Սա կարևոր կետ է: նշանակում է, որ Բարսեղն ինքը իշխանություն չուներ ո՛չ Փոքր Հայքի, ո՛չ էլ Մեծ Հայքի վրա: Դրանք իր իրավասություններից դուրս էին[57]: Ըստ Նիկիայի ժողովի կանոնների, մի եպիսկոպոս իրավունք չուներ խառնվելու իր իշխանությունից դուրս գտնվող ծխերի խնդիրներին: Հավանաբար հայերի կողմից Բարսեղի քայլը նկատվել է ոտնձգություն: Սա կարելի է բացատրել նրանով, թե ինչու Թեոդոտոսը՝ Նիկոպոլիսի եպիսկոպոսն ու Փոքր Հայքի միտրոպոլիտը, մերժեց Բարսեղին օգնել իր այդ աշխատանքում[58]: Բարսեղը նշում է, որ Թեոդոտոսը մերժել է իրեն օգնել աստվածաբանական պատճառներով և բողոքում է Տերենտիոսին. «Ինչպե՞ս հնարավոր էր ինձ... կատարել իմ վրա դրված հրամաններից որևէ մեկը.. երբ իմ գործընկերը այս աշխատանքում (Թեոդոտոսը) իմ նկատմամբ այսպես է տրամադրվել...»: Այս շրջանում հայոց լեզուն և ավանդությունները աշխույժ էին Փոքր Հայքում: «...(Թեոդոտոսի) ծխում կան աստվածավախ և գիտուն մարդիկ, որոնք վարժ են այդ ժողովրդի լեզվին և այլ յուրահատկություններին...»: Բարսեղն ասում է, որ թեև ինքը գիտի անունները այդ մարդկանց, որոնք կարող էին օգնել իրեն, բայց չի ուզում թվել, որպեսզի, եթե ապագայում Հայաստանում կրկին հարց ծագի այդ աշխատանքները կատարելու, նրանք կարողանան օգտակար լինել: Առաջին հայացքից վերևի հատվածը այն տպավորությունն է թողնում, թե Բարսեղին հրամայվել էր եպիսկոպոսներ նշանակել Մեծ Հայքում: Բայց այդպես չէ: Ինչպես երևում է, Բարսեղը Հայաստան ասելով՝ հասկանում է Փոքր Հայքը: Նույն նամակում Բարսեղն ասում է, որ ինքը «...հետաքրքրեց այն մեղադրանքը, որ ծանրացել էր մեր Կյուրեղ եղբոր՝ Հայաստանի եպիսկոպոսի վրա... և թվում է, թե որոշ չափով կարողացանք հաշտեցնել Սատաղի աշխարհականներին նրա հետ...»: Այնպես որ Բարսեղի «Հայոց եպիսկոպոս» արտահայտությունը ակնարկ է Սատաղի եպիսկոպոսի մասին՝ Փոքր Հայքում: Մի ուրիշ նամակում, ուղղված Սամոսատի Եվսեբեոս եպիսկոպոսին[59], Բարսեղն ասում է, թե նրա նամակն ինքը ստացել է „ἐν τῇ γείτονι χώρα τῆς Ἀρμενίας“: Սա ակնարկ է Փոքր Հայքին վերաբերող: Մեկ այլ նամակում[60] ասում է, թե «Ֆրոնտոն՝ կես արիոսական եպիսկոպոսը, ամբողջ Հայաստանի համար կվվելի դարձավ»: Ֆրոնտոն Նիկոպոլսի եպիսկոպոսն էր Փոքր Հայքում: Բարսեղի երեք նամակները առնչվում են Փավստոսի ոչ կանոնական ձեռնադրության խնդրանքին: Մելետիոսին (Անտիոքի ուղղափառ եպիսկոպոսը, որ աքսորվել էր Փոքր Հայք) ուղղված նամակում[61] Բարսեղը գանգատվում է, թե Անթիմոսը (Կապադովկիայի մի մասի (Secunda) եպիսկոպոսը 371 թ.) ձեռնադրել է Փավստոսին եպիսկոպոս՝ Կյուրեղի փոխարեն, «առանց վկայագրեր ունենալու»: Նիկոպոլսի եպիսկոպոս Թեոդոտոսին ուղղված նամակում[62] Բարսեղը նույն հարցով գանգատվում է, այս անգամ ավելի մանրամասն ձևով: Նա ասում է, թե Փավստոսը եկավ՝ հետը բերելով «...մի նամակ մի ոմն Պապից...»: Եթե սա ակնարկ է հայոց Պապ թագավորի մասին, այդ նշանակում է, որ Պապը աշխատում էր նշանակել հոգևորականներ Փոքր Հայքում իր ընտրությամբ: Որ Փավստոսը Փոքր Հայքի մի ծխում էր նշանակվել, երևում է այն խոսքերից, որ Բարսեղն ասում է հստակորեն, թե ինքը սպասում էր վկայագիրը Նիկոպոլսի Թեոդոտոս և Սատաղի Փոյմենիոս եպիսկոպոսներից:

Մի այլ նամակում, ուղղված իտալացիներին[63], Բարսեղը հիշում է եպիսկոպոսների, որոնք աստվածաբանական հարցերում համամիտ են եղել իր հետ: Այս եպիսկոպոսների շարքում ունենք Խոսրով, Սահակ և Ներսես անունները, որոնք արևելյան անուններ են և բավականին տարածված այդ ժամանակաշրջանում, հետևաբար կարելի չէ ճշտել նրանց ինքնությունը:

Հարևանցի այլ ակնարկներ էլ կան Փոքր Հայքի մասին. օրինակ, 195-րդ նամակը ուղղված է „Εὐφρονίῳ ἐπισκόπῳ Κολωνίας Ἀρμενίας“: 278-րդ նամակը, հասցեագրված ոմն Վալերիայի, խոսում է Բարսեղի Փոքր Հայքի Օրֆանեևե քաղաքը կատարած այցելության մասին: 114-րդ նամակում հիշված է „Ἀρμενίας τῆς τετραπόλεως“:

Այս բոլոր փաստերից երևում է, որ Բարսեղը եպիսկոպոս լինելուց հետո (370) գոր-

ծոն մասնակիցն էր դարձել Փոքր Հայքի եկեղեցական իրադարձությունների: Հետևաբար նրա ազդեցությունն էլ Մեծ Հայքում պետք է կգալի դառնար այս թվականներին, մանավանդ երբ նկատի առնենք Հայաստանում հաստատված խաղաղությունը բյուզանդական միջամտության շնորհիվ:

Այս ժամանակաշրջանում (370—373) Ներսես Մեծը աշխատում է վերակազմակերպել Հայ Եկեղեցին, որը տուժել էր պարսիկների արշավանքներից: Ըստ Բուզանդի, Ներսեսը վերաշինում է կործանված բոլոր վայրերը Հայաստանում[64]. «...Ամեն տեղ եկեղեցիներ էր շինում, ավերակները նորոգում, բոլոր խանգարված կարգերը վերականգնում և ուղղում: ...Նա շատացրեց (եկեղեցու) պաշտոնյաների թիվը, ամեն տեղ տեսուչ-եպիսկոպոսներ դրեց...»:

Ահա այս շրջանակի մեջ պետք է տեսնել Բարսեղի ազդեցությունը և Ներսես Մեծի բարենորոգչական աշխատանքները:

Ըստ Խորենացու[65], Ներսեսը վանքերի վանահայրեր և ղեկավարներ է նշանակում Շաղիտային, Եփրեմին, Գինդին, իսկ Խադին, որն իր անձնական սարկավագն էր, նշանակում է վերատեսուչ իր հիմնած բոլոր օթևաններին: Բուզանդն[66] ավելի շատ տեղեկություններ է տալիս Խադի մասին: Ներսեսը Բյուզանդիա գնալուց առաջ եպիսկոպոս է ձեռնադրում Խադին Բագրևանդի և Արշարունիքի վրա և որպես իր տեղապահը թողնում է նրան Հայաստանում: Խադը քննադատվել է ձիերի և հագուստների հանդեպ թույլություն ունենալու պատճառով: Հետագայում նա տեղի տալով՝ հրաժարվում է դրանցից և հագնում վանական սքեմը: Խադն ամուսնացած էր և երկու աղջիկ ուներ, բայց մենք չգիտենք՝ կինը մահացե՞լ էր, թե՞ ոչ նրա եպիսկոպոս լինելուց առաջ[67]:

Եպիփանը[68], որը Շաղիտայի ընկերն էր և աջակցել էր Դանիելին, Ներսեսի մահից հետո ապրել է Ծոփքում՝ Մամբրեի անապատում, մի անձավի մեջ, վայրի գազանների հետ միասին: Նա այդ շրջանը վանականներով է լցնում և նշանակում ուսուցիչներ, ապա անցնում է Աղձնիք, որտեղ նույնպես հիմնում է բազմաթիվ վանքեր: Նրան պետք է նկատել հունական ազդեցության ներկայացուցիչ: Այս խստակրոն վանականների մեջ կային մարդիկ, որոնք իրենց մանկությունից իսկ, բացի բանջարեղենից և ջրից, ուրիշ բան չէին կերել: Հետագայում Եպիփանը, վերցնելով իր հետևորդներից 500 հոգի, անցնում է Բյուզանդիա և գնում մի անապատ կղզի: Սա ցույց է տալիս, որ Բուզանդը օգտվել է ժողովրդական լրույցներից և ավանդություններից:

Դանիել Մեծի աշակերտներից է նաև Գինդը[69], որը Դանիելի մահից հետո հաջորդում է նրան իբրև աբեղաների գլխավոր, միայնակյացների վարդապետ և առաջնորդ, վանքերի վերակացու, բոլոր անապատականների ուսուցիչ «...և առհասարակ տեսուչ այն բոլոր մարդկանց, որոնք Աստուծո սիրո համար հրաժարվել էին աշխարհից և բնակվում էին անապատներում՝ հաստատվելով քարանձավներում, այրերում ու երկրի քարածերպերում»: Նրանք ունեին միայն մի զգեստ և կերակրվում էին խոտով, բանջարեղենով ու արմատներով: Նրանք ապրում էին առանց խնամքի և դարմանի, առանց աշխարհիկ հագուստի: Նրանք չարչարվում, տառապում էին անապատում, իրենց մարմինները ենթարկում ցրտի ու տոթի, քաղցի ու ծարավի, և այս բոլորը նրա համար, որպեսզի փաստեն, թե մարմնական հանգիստը իրենց համար կարևորություն չունի, այլ Աստուծո սերն է կարևոր: Մենք ունենք նաև այլ վանականների անուններ, ինչպես՝ Վաչագը, Արտույտը, Մարախը և Տրդատը: Վերջինս հաստատվել էր Տարոնում, որտեղ եղբայրանոցներ էր հիմնել: Գինդը հաստատվել էր Ոսկիք կոչված շրջանում, որտեղ ապրել էր Լուսավորիչը իր կյանքի վերջում: Նա իր մոտ էր պահում իր աշակերտներից Մուշեին, իսկ մյուսները շրջում և քարոզում էին ամենուր: Ըստ Բուզանդի[70] Պապը կործանել էր Ներսես Մեծի կառուցած բոլոր օթևաններն ու վանքերը: Պապ թագավորը «հրամայում է այս կուսանոցներն ավերել և հրամայում է պիղծ խառնակության մատնել հավատավոր կույսերին»: Բայց սա չափազանցություն է, մանավանդ երբ նկատի ենք ունենում Գինդի և նրա ընկերների ծավալած վանական-ճգնավորական աշխատանքները: Ճիշտ է, որ այդ շրջանից սկսած դադարել է հայ իրականության մեջ կանանց մենաստանների գոյությունը: Մեծն Ներսեսը հիմնել էր բազմաթիվ մենաստաններ կանանց համար և դրանք շրջափակել պարիսպներով՝ կույսերին առեվանգումից պաշտպանելու համար: Նրանք ազատ էին տուրքերից, և նրանց ապրուստը հոգացվում էր պետության կողմից, ինչպես էր մյուս հաստատություններում: Այս միջոցները պետք է նյութապես ապահովեին նրանց, որպեսզի նրանք իրենց ամբողջ ժամանակը անցկացնեին աղոթքներով:

Հավանական է այն, որ Եկեղեցին ժամանակի ընթացքում տեր էր դարձել շատ կալվածքների և մեծ հարստության՝ ազատ լինելով տուրքերից: Ներսես Մեծի ժամանակ գրավել էր շատերին դեպի վանականությունն ու կուսությունը: Այս բոլորը բնականաբար թուլացնում էր կենտրոնական իշխանությու-

նը, և Պապը աշխատել է չափավորել այն: Պարզ է, որ նրա միջոցառումները լավ աչքով չեն դիտվել Եկեղեցու ներկայացուցիչների կողմից:

Բուլանդը ծանոթ է եղել ոչ միայն ճգնավորների և վանականների վարքերին, այլև նրանց ասույթներին ու նրանց մասին եղած լրույցներին, որոնք պահպանվել են «Անապատի հայրերի խոսքերը» անունով գրքերում: Նրանցից մեր պատմիչը բերում է երկու օրինակ:

Առաջինում պատմվում է, թե երբ Եպիփանը ճամփորդում է իր աշակերտների հետ, հանդիպում է մի կնոջ և փորձելու համար նրանց՝ բացականչում է, թե ի՞նչ գեղեցիկ կին է նա: Աշակերտներից մեկն ասում է, թե նրա աչքի մեկը կույր է: Եպիփանը հանդիմանում է աշակերտին՝ ասելով. «Դու ինչո՞ւ նայեցիր նրան... ուրեմն քո մեջ չար խորհուրդներ կան»: Այս ասելով՝ Եպիփանը հեռացնում է իրենից մանկահասակ աշակերտին[71]: Բարսեղ Մեծն ասում է, որ վանականները պետք է վանքում մնան՝ հեռու աշխարհիկ երևույթներից և պետք է խուսափեն աշխարհական մարդկանց հետ շփվելուց: Իսկ եթե անհրաժեշտ լինի ճամփորդել, այդ պետք է ավագներին թողնել, որ նրանք դիմանան փորձությանը:

Ըստ մյուս օրինակի[72], Եպիփանի հիմնած վանքերից մեկում լինում է մի խստակրոն մենակյաց, որը նույնիսկ չի հաղորդվում՝ մտածելով, թե քահանայի ձեռքին պատարագի ընթացքում գինին Հիսուսի արյան չի վերածվում: Մի օր, երբ քահանան մատուռի մեջ պատարագ է մատուցում, այս անհավատ եղբայրը ներկա է լինում: Պատարագիչ քահանան, նախքան պատարագելը, խնդրում է Աստծուն, որ բանա այդ անհավատ եղբոր հոգու աչքերը, ապա մատուցում է իր պատարագը: Երբ հասնում է պատարագամատույցի «Հայր մեր»-ին, այս անհավատ եղբայրը սկսում է հրաշք երևույթներ տեսնել. նա տեսնում է, որ Քրիստոսը կանգնած է սուրբ Սեղանի վրա, և նրա կողից արյունը կաթում է բաժակի մեջ: Նա վախենում է, հուզվում, կարմրում և ուշաթափ գետին ընկնում: Քահանան, երբ վերջացնում է պատարագը, իջնում է բեմից և տեսնում եղբորը՝ ուշաթափ ընկած: Նրան ջուր տալով սթափեցնում է: Վերջինս պատմում է տեսածը: Քահանան նրան առաջարկում է հաղորդվել: Սակայն եղբայրը իրեն անարժան է համարում, մտնում է մի փոսի մեջ և յոթ տարի ապաշխարում իր թերահավատության համար, ապա ելնում փոսից ու հաղորդվում:

Այս պատմությունը չի կարող առաջացած լինել շատ վաղ, երբ տակավին չէր սկսվել վանական շարժումը: Մանավանդ պատարագամատույցի հիշատակումը հուշում է, որ այն պետք է չորրորդ դարում առաջացած լինի, որովհետև պատարագամատույցները՝ Աթանասինը, Բարսեղինը, Նպիսանցունը, կազմավորվել են 4-րդ դարում: Մյուս կողմից՝ վանականության վերջնական կազմավորումից ավելի ուշ չէր կարող լինել, որովհետև հավիվ թե այդ ժամանակ լինեին վանականներ, որ համարձակվեին այդպիսի կարծիք հայտնել ս. Հաղորդության մասին:

Ճգնավորական շարժման սկզբնավորության ժամանակ մարդիկ Եկեղեցուց անկախ իրենց համար ճգնում էին, առանց կապ ունենալու Եկեղեցու և նրա պաշտոնյաների հետ: Հետևաբար ս. Հաղորդությունը, որը կազմում է Եկեղեցու հիմքը, մի տեսակ անտեսվում էր: Եկեղեցին, զգալով այս շարժումը, ինքը կազմակերպեց և իր հովանավորության տակ վերցրեց այն: Բերված պատմության նպատակն էլ նույնն է՝ նշել, որ քրիստոնյան, նույնիսկ խստակրոն ճգնավորը, առանց հաղորդության դատապարտված է կորստյան:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] **Sozomen**, The Ecclesiastical Histoy, London, 1891. Book III. ch 14. p. 293.

[2] **Ibid**, Aook IV. ch 24. p. 320.

[3] Սոկրատայ սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն, աշխատասիրութեամբ Մեսրոպ վ. Տեր Մովսէսեան, Վաղարշապատ, 1897, գիրք Բ, գլուխ ԽԳ, էջ 205:

[4] **E. Venebles**, article in Dictionary of Christian Biography. London, 1880. Eustathius. Vol. 11. p. 348.

[5] **F. Loofs**. Eustathius Von Sebaste und chronologie der Basilius Briefe. Halle 1898. p 86 ff. L. Duchesne, Hist. vol. II. p. 303,

[6] **Griboment**, Article. Eustathe in Dictionaire d'histoire et Géographie Ecclésiastique. Paris 1967. Vol 16, p. 27.

[7] Բարսեղ Կեսարացին իր 263-րդ նամակում ասում է, որ Եվստաթեոսը սովորել է Արիոսի մոտ և հետևել իր ուսուցչին՝ լինելով նրա ամենահավատարիմ աշակերտը. „St. Basil, Letters. Engl. Transl. R. J. Deferrari, Leob Class. Libr, London 1934. Vol IV p. 93 ff. „Ἀρίου τοῦ ἰδίου διδασκάλου Εὐστάθιος ὁ ἐκ τῆς Σεβαστείας, τὴν κατὰ τὴν μικραν. Ἀρμενίαν, ὅς πάλαι, μαθητευθεὶς τῷ Ἀρίῳ". *Տես նաև նամակներ № 354 և 313։*

[8] **Athanasius** Historia ad Monachus. Patrologia Greca: t. XXV, col 7000 (B).

[9] **Պ. Տեր-Պողոսյան,** Ս. Բարսեղ Կեսարացին և իր գրությունները հայերեն թարգմանությամբ, Հանդես Ամսօրյա, 1968, հմր. 10—12, էջ 390: Է. Վեները (**E. Venebles,** DCB. p 384) պարզապես ասում է, որ Անտիոքի եպիսկոպոս Եվստաթեոսը մերժել է ձեռնադրել Սեբաստիայի Եվստաթեոսին՝ վերջինիս արիոսական լինելու պատճառով:

[10] **Պ. Տեր-Պողոսյան,** նույն տեղում և Art. Eustathius of Sebaete in New Catholic Encyclopedia USA 1967. Vol V, p. 638.

[11] **Griboment,** D.H.G.E. p. 27—28.

[12] **Sozomen**, Book IV. ch. 24. p. 320. cf **F. Loofs,** Eust. Von Seb. p. 86.

[13] **Gregory Nazianzus**, P.G. Vol 29. p. XXIII.

[14] P.G. Vol 45. p. 265 (c).

[15] **Basil,** Letters, I.222.3; 244,14; compare Migne, Vol 29. p. VI, **Տ. Պետրոսյան,** h. Ա. 1968 էջ 386.

[16] **C. Hnfelle,** Hist. des Conc. Tome I. Part 2, p. 1044.

[17] **Griboment**. D.H.G.E. p. 28 et Le Monachisme au IVe siècle, p. 401.

[18] **G. Bardy,** art. Basile Evêque de-Césaré in G.H.G.E., Vol VI. p. 113; Basil's Letter № 223 Vol III, p. 293; **L. Duchesne,** Hist. Vol II. p. 386. ասում է, որ Եվստաթեոսն ու Բարսեղը այցելել են Եգիպտոս, ու նրանց համարում է եգիպտացի վանականների աշակերտներ (էջ 410): Երբ Բարսեղը սկսեց հետևել Եվստաթեոսին, այդ ժամանակ Եվստաթեոսի որդեգրած ճգնողական ուղղությունը Ուղղափառ Եկեղեցու կողմից ոչ մի կասկածի տակ չէր առնվում, այս հարցում աշակերտն ու ուսուցիչը միշտ քայլեցին ձեռք-ձեռքի (էջ 411):

[19] Բարսեղն իր 223-րդ նամակում ասում է. «Ի՞նչքան հաճախ դու (Եվստաթեոս) այցելեցիր մեզ՝ Իրիս գետի մոտ գտնվող վանքում, մանավանդ երբ մեր աստվածահաճո եղբայրը՝ Գրիգորը, ինձ հետ էր՝ հետապնդելով միևնույն նպատակը կյանքում, ինչպես ես... և քանի օրեր մենք միասին անցկացրինք գյուղում՝ իմ մոտ տանը, ապրելով այնտեղ որպես ընկերներ և իրար հետ գիշեր ու ցերեկ կրուցելով...»:

[20] **D. Ammand**, L'ascèse monastique de Saint Basile, Essai historique, Mardesous. 1948. pp. 52—61.

[21] **S. Savaille,** art. Eustathe, in D.T.C, Vol V. part 2. p. 1565. **ասում է, որ Եվստաթեոսը քահանա էր ձեռնադրվել Հերմոգենես եպիսկոպոսի կողմից՝ Նիկիայի հանգանակը ընդունելուց հետո.** DCB. pp. 384—385; Basil's Letter № 237 (Vol III, p. 311). № 263 (Vol IV. p. 93—95) Stud. Patrist. t. II. 1957. p. 401; Athanas in his letter to the bishops of Egypt) **հիշում է Եվստաթեոսին արիոսական եպիսկոպոսների շարքում, հետևաբար Եվստաթեոսը եպիսկոպոս ձեռնադրված պետք է լինի 357-ից առաջ**: (Athanas' Letter.—Nicene Anti Nicene Fathers Vol IV. p. 226).

[22] Բարսեղը խիստ կերպով բողոքում է, որ Եվստաթեոսի կողմից ուղարկված մարդիկ լրտեսներ էին, որոնք հսկում էին իր աշխատանքները և սուտ տեղեկություններ հաղորդում իրենց տիրոջը:

[23] Բարսեղի 212-րդ նամակի Բ մասը և 46 (Vol II, p 157). Բարսեղը հիշում է Եվստաթեոսին՝ «մեր շատ հարգելի եղբայր և գործընկեր»:

[24] **Sozomen,** Book IV. ch 27. p 322; Socrates, Book II. ch 45, p. 74. **պարզապես ասում է, որ Եվստաթեոսը միացավ Մակեդոնիոսին՝ աստվածաբանական հարցերից ելնելով:**

[25] **B. J. Kidd,** A History of the Church to AD. 461. Oxford 1922 Vol III. p. 190.

[26] **J. Griboment,** Stud. Patrist. part II. p. 414. ...: Le prêtre Timothée de Constantinople, notre meilleur témoin des Actes de Side leuradonne entre autre le nom d'Eustathiens; **M. Kmosko,** Patrologia Syriaca, III. Paris 1926. p. CCXYI. **Հովհաննես Դամասկացին մծղնեականներին համարում է արիոսականներ և Ստաթեոսի ծայրահեղ աշակերտներ:**

[37] **Hefele,** Hist. des Conc. Vol I part 2 p. 1029. **Վ. Հակոբյան,** Կանոնագիրք հայոց, Երևան, ԳԱ, 1964, հտ. 1, էջ 188—201:

[28] Ըստ Բարսեղի (Երկար օրենքներ, հմր. 12, էջ 173), մարդիկ, ովքեր ցանկանում են այսպիսի մի կյանք վարել, պետք է հարցաքննվեն, թե արդյոք նրանց կանայք համաձա՞յն են, թե՞ ոչ, քանի որ, ըստ Ղուկասի (ԺԴ 26), Աստծուն հնազանդությունը ուրիշ բաներից նախապատիվ էր: Բայց Renutiatione Saeculi, p 61 աշխատության մեջ Բարսեղը գրում է, որ ամուսնացածներին կարելի է պիջել միայն իրենց կնոջ հետ հարսբերության հարցում: Բայց մյուս պատվիրանները բոլորի համար նույնն են...:

Աթանասը Ամմին ուղղված իր նամակում (Letter XLVIII, Nicene and Anti Nicene Fathers. Vol. p 557) ասում է, որ կյանքի երկու ձևեր կան. մեկը չափավոր և սովորական, այսինքն՝ ամուսնական կյանքը, մյուսը՝ հրեշտակային, այսինքն՝ կուսական: Եթե մարդ ընդունի ամուսնական կյանքը, չի մեղադրվելու, բայց և մեծ ընծաներ չի ընդունելու, ինչպես մյուսը: Նա ստանալու է (նվեր), որովհետև ինքն էլ է պտուղ տալիս՝ մեկի դեմ երեսուն:

[29] Բարսեղն իր կարճ օրենքներում (CXXIX) ասում է, որ պահեցողության ժամերը որևէ անհատի ցանկությամբ չեն դրվում, այլ՝ նրանց կարիքների համար, ովքեր կրոնական կյանք են ընդունել:

[30] **Hefee,** p. 43, "...manteaux grossiers comme ceux queles philosophes affectaient de porter leur mépis pour toute espèce de luxe...". **Բարսեղը** (Asetic Discourse, p. 138) **վանահորն է թողնում որոշել,** թե վանականները ինչ պետք է հագնեն, իսկ Երկար օրենքներում (ԻԲ) ասում է, որ քրիստոնյան պետք է նույնիսկ իր հագուստներով սարբերվի. հագուստները պետք է լինեն պարզ և ծառայեն «մեր ամոթալի տեղերը» ծածկելու, մեզ եղանակից պաշտպանելու համար, ոչ թե ցուցադրության համար

[31] Բարսեղն իր «Երկար օրենքներ»-ում ասում է, որ նրանք ամեն տեսակ կերակուր պետք է ուտեն, եթե առիթ ընծայվի, որպեսզի ցույց տան, թե մաքուր մարդկանց համար ամեն ինչ մաքուր է (Տիտոս Ա 15):

[32] Բարսեղն իր «Երկար օրենքներ»-ում (Longer Rules XLI. p 211) ասում է, որ քրիստոնյաները, աղոթքից բացի, ուրիշ պատճառով չպետք է լինեն մարտիրոսների գերեզմանների մոտ՝ հիշելով, թե ինչպես սրբերը իրենց աստվածավախության պատճառով նույնիսկ մահը հանձն առան, որպեսզի մենք էլ համակվենք այդպիսի նախանձախնդրությամբ:

Եպիփանը (Epiphane, Advers Haer. P.G. I. XLI. col 505) ասում է, որ արիոսականները մերժում էին մեռելների վրա կատարվող աղոթքները:

[33] Բարսեղը (Morals LXXV (I)) ասում է, որ ծառաները պետք է հնազանդ լինեն իրենց տերերին, իսկ տերերը պետք է լավ վարվեն իրենց ծառաների հետ՝ հիշելով իրենց ճշմարիտ Տիրոջը:

[34] Փ. Բուզանդ, գիրք Գ, գլ. 5:

[35] Օրմանյանը (հտ. Ա, էջ 146) Հուսիկիկ ծննդյան թվականը դնում է 295-ին, կաթողիկոսական գահ բարձրանալը՝ 241 թվականին: Քանի որ Հուսիկի կինը մահացել էր նախքան նրա կաթողիկոս լինելը, նրա ապրելաձևը համընկնում էր Գանզրայի ժողովից հետո ընկած ժամանակաշրջանին, ուստի և հնարավոր է դառնում զուգահեռ անցկացնել նրա և Եվստաթեոսի միջև:

[36] Փ. Բուզանդ, գիրք Գ, գլ. ԺԴ:

[37] Փ. Բուզանդ, գիրք Գ, գլ. ԺԱ:

[38] F. C. Conybeare, The Key of the Truth Clarenden Press. Oxford 1898. appendix IX p 178—186·

Կոնիբերն ասում է. որ նամակը պետք է գրված լինի Նիկիայի ժողովից հետո, Մակարիոսի մահից առաջ (325—335): Օրմանյանը (Ազգապատում, հտ. Ա, էջ 131) թվագրում է 333—335 թվականների միջև:

[39] S. Epiphan, Adversus Haeresus, Lib. I. tome III. Haeres XIePG. t. XLI. col 680.

[40] The key of the truth. p. 181.

[41] Փ. Բուզանդ, գիրք Զ, գլ. Զ:

[42] Փ. Բուզանդ, գիրք Դ, գլ. ԺԲ—ԺԳ:

[43] Փ. Բուզանդ, գիրք Զ, գլ. Ե:

[44] Մալխասյանը Խորենացու թարգմանության վերջում իր տված տախտակի մեջ Արշակի թագավորության սկիզբը դնում է 353 թվականին, իսկ Օրմանյանը (հտ. Ա, էջ 164) նշում է 350 թվականը: Վերջինս ավելի հավանական է թվում: Այն չէր կարող լինել ավելի ուշ Հովհանես Ուրացողի ժամանակաշրջանում (361—363), որը հակաքրիստոնեական ուղղություն էր որդեգրել, և ոչ էլ Հովհանոսի խաղաղության դաշինքից (364) հետո:

Աթանասն իր «Արիոսականների պատմությունը» երկում (Nicene-end Anti Nicene Fathers. Volume IV. London, 1892, ch 68, p. 226), նշում է, որ Կոստանդիոսը շատ անարգալից կերպով վարվեց իր եղբոր՝ Կոստանդի հետ, որի մահից հետո նրա նշանած Օլիմպիային տալիս է բարբարոսներին (հայերին):

Նշենք, որ Կոստանդը մահացել է 350 թ., ուստի նրա մահից անմիջապես հետո Կոստանդիոսը Օլիմպիային կնության էր տվել Արշակին:

Ամմիանոսը (Ammianus, XXVII.7.12. Vol II. p 535) ասում է. «....Այս պայմաններին մեկ ուրիշն էլ էր ավելացել, որը շատ կործանարար է անպատկառ էր, այն է... մեր հավատարիմ և վստահելի ընկերոջը՝ Արշակին, երբեք, եթե նա խնդրի, օգնություն չպետք է տրվի ընդդեմ պարսից»:

[45] Փ. Բուզանդ, գիրք Դ, գլ. Գ: Մ. Խորենացի, գիրք Գ, գլ. Ի:

[46] Սոփերք, հտ. Զ, էջ 94:

[47] Օրմանյան, Ազգապատում, հտ Ա, էջ 163—164:

[48] Փ. Բուզանդ, գիրք Դ, գլ. Դ:

[49] Ա. Սուքրյան, Մեծն Ներսես, «Բազմավեպ», 1877. Է, էջ 321:

[50] Փ. Բուզանդ, գիրք Դ, գլ. Գ:

[51] Բուզանդ, գիրք Դ, գլ. Դ: Այս նույն միտքը՝ կրոնավորների և աշխարհականների միջև եղած տարբերությունը, արտահայտում է նաև Բարսեղը. տես. Renuntiatione Saeculi, p. 61.

[52] Մ. Խորենացի, գիրք Գ, գլ. Ի և Սոփերք, հտ. Զ, էջ 39:

[53] Սոփերք, հտ. Զ, էջ 30:

[54] Ագաթանգեղոս, հատ. 806:

[55] Բուզանդը (գիրք Դ, գլ. ԾԵ) ասում է; որ հայերը Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ մի պատգամավորություն են ուղարկել Բյուզանդիա: 16-րդ գլխում նա պարզապես ասում է, որ Ներսեսը քաշվեց պալատից և ետ չեկավ մինչև Արշակի մահը: Ըստ նույն պատմիչի, երբ Պապը գալիս է Հայաստան, փնտրում է Ներսեսին (գիրք Ե, գլ. Ա):

Ամմիանոսը (XXVI.12.9. Vol III. p 81—3.) հիշում է Պապի ժամանելը Բյուզանդիա՝ մի քանի հետևորդների հետ միասին, ջուրջ 368 թ.: Պապը ուղարկվում է Նեոկեսարիա ուսում ստանալու: Հայերը կրկին օգնություն են խնդրում Արանեսի և Կյուլակեսի գլխավորությամբ (սրանք մեր Մեհրուժան և Վասեան Մամիկոնյան իշխաններն են): Խորենացին (գիրք Գ, գլ. ԼԶ) մի ակնարկություն ունի, որտեղ Ներսես Մեծը օգնություն է խնդրում բյուզանդական կայսրից: Ներսես Մեծը գործոն դեր ուներ բյուզանդացիների օժանդակությամբ Պապին Հայաստանի գահին հաստատելու հարցում: Ներսեսը հավանաբար 368—370 թվականներին գտնվում էր բյուզանդական սահմաններում, այլապես դժվար է բացատրել նրա մասին եղած լռությունը, երբ պարսիկները ավերում էին երկիրը ամենավայրագ ձևով:

[56] Basil, Letter, № XCIX, Vol II, p 171.

[57] Ըստ Փ. Բուզանդի (գիրք Ե, գլ. ԻԴ), Ներսես Մեծի մահից հետո Պապը Հուսիկին կաթողիկոս է նշանակում, առանց նրան Կեսարիա ուղարկելու ձեռնադրության համար: Կեսարիայի եպիսկոպոսը մի ժողով է գումարում և մի խիստ նամակ գրում Հուսիկ կաթողիկոսին և Պապ թագավորին: Այդ ժամա-

նակից, ասում է Բուզանդը, հայոց կաթողիկոսը ոչ մի իշխանություն չուներ, բացի թագավորի սեղանը օրհնելուց: Իսկ Խորենացին (գիրք Գ, գլ. ԼԹ) պարզապես նշում է, որ Պապը գտավ Աղբիանոսի տոհմից Սահակին, «զոր կացոյց փոխանակ Ներսեսի առանց մեծի արքեպիսկոպոսին Կեսարու»:

Իհարկե, եթե Բուզանդը ճիշտ լիներ, այդ դեպքում մենք գոնե մի ակնարկություն կգտնեինք Բարսեղի նամակներում այս հարցի մասին, որովհետև նա էր ժամանակի եպիսկոպոսը: Եթե Բարսեղը՝ Կեսարիայի Աթոռի ամենից նշանավոր եպիսկոպոսը, գերիշխանություն չուներ հայոց կաթողիկոսի նկատմամբ, ապա ո՛չ նրա հաջորդները և ո՛չ էլ նախորդները այդպիսի հավակնություն չէին կարող ունենալ, ինչպես ոմանք ձգտում են ցույց տալ: Եղածը պարզապես մի տեսակ հարգանքի տուրք էր այն Աթոռին, որի կողմից Լուսավորիչը եպիսկոպոս էր ձեռնադրվել:

58 **Basil**, Letter No, XCIX. vol II, p. 173.

59 Ibid No C. p. 183.

60 Ibid No CCXXXIX. p. 417.

61 Ibid No CXX. p. 249.

62 Ibid No CXXI. p. 251.

63 Ibid No CBLXIII.

64 **Փ. Բուզանդ**, գիրք Ե, գլ. ԻԱ:

65 **Մ. Խորենացի**, գիրք Գ, գլ. Ի:

66 **Փ. Բուզանդ**, գիրք Դ, գլ. ԺԲ: **Մ. Խորենացի**, գիրք Գ, գլ. ԼԱ: Խաղին բաղդատում է Եղիայի և Եղիսեի հետ:

67 Հետաքրքիր է, որ Բուզանդը (Գիրք Դ, գլ. ԺԲ) ասում է, թե նա իր աղջիկներից մեկին ամուսնացրել էր ոմն Ասրակի հետ և սա «իր աներոջ մահից հետո նրա Աթոռին նստեց»: Եթե սրանով պետք է հասկանալ, որ Ասրակը եպիսկոպոսական Աթոռ է նստել, սա կարելի է վերջին ակնարկություններից մեկը համարել ամուսնացյալ եպիսկոպոսների մասին Հայաստանում Դ դարի վերջերին:

68 **Փ. Բուզանդ**, գիրք Ե, գլ. ԻԷ:

69 **Փ. Բուզանդ**, գիրք Զ, գլ. ԺԶ:

70 **Փ. Բուզանդ**, գիրք Ե, գլ. ԼԱ: Սոփերք, հտ. Զ, էջ 116:

71 **Բուզանդ**, գիրք Ե, գլ. ԻԷ:

72 **Փ. Բուզանդ**, գիրք Ե, գլ. ԻԸ: